ման յառաջադիմութեանը ազգիս մէջ, ինչպէս Վրաստանի Հայոց Թեմական վերատեսուչը՝ աշխատասէր և ուսումնասէր անձն գոլով՝ անդադար կաշխատի՝ այս վիճակի բոլոր դպրոցների կառավարութիւնը այլ և այլ եղանակաւ բարեկարգել, որոց մէջ է Թէլաւի համար ևս արածը։ Նա գալով Թէլաւ անցեալ 74 Թուականի դեկտ. 2ին, տեսնելով դպրոցաց արդեանց սակաւութիւնը՝ ըսկսաւ Մայր եկեղեցւոյ մէջ մեծահանդէս պատարագից յետոյ Վրաց լեզուաւ խիստ ազդու քարոզ խօսիլ և ապա հրաւիրել ժողովուրդը ի Գայիանեան ուսումնարան ստորագրել նուէր յօգուտ երկսեռ դպրոցաց, Թէլաւի հայ ժողովրդականք թէ և շատ բարեպաշտական և ազգասիրական յատկութիւններ ունին, սակայն ուսման յարգը և նշանակութիւնը նոցա մէջ ուշ մուտ գործելով՝ վարագուրված էր ցարդ նոցա բարի յատկութիւնները. վասն որոյ տեսնելով պատճառը, ցոյց տուին և նոքա էլ իրանց բարի և ազգասիրական յատկութիւնները։ Թէլաւի հայոց գործակատար լինելով Գէորգ աւագ քահանայն Տ. Սարգսեանց, կամեցաւ այսպիսի բարենպատակ գործքի մէջ սիրտ տալ իւր համաքաղաքացի ժողովրդոց, վասն որոյ նուիրեց երկու հարիւր ռուբլի յօգուտ երկսեռ դպրոցաց քաղաքիս, որին հետևելով բարեկրօն քահանայք և բարեպաշտ ժողովրդականք՝ ցոյց տուին արդարև իրանց առատանուէր ստորագրութեամբ ազգասիրութիւնը և ուսումնասիրութիւնը, որ և ի նոյն օրէ՝ այս ինքն դեկտ. 8էն ցայսօր ստորագրուած գումարն հասած է 2265 ռուբլոյ և ստորագրութիւնը դարձեալ կշարունակէ բարեկրօն գործակատարին։

Հայոց լեզուի ուսուցիչն էլ Մայր Աթոռոյ Թանգարանէն չորս հատ տպեալ Դանիէլի թերթը բերել տուած լինելով, սովրեցուցած էր չորս օրիորդաց Դանիէլի ընթերցանութեան ձևը, որոնք ամսոյս 5ին երեկոյեանը սկսան պարզ մաքուր և հայացի արտաբերութեամբ կարդալ քաղաքիս աւագ եկեղեցւոյ մէջ, որ այն առթիւն ներգործեց ժողովրդոց սրտերը, որք թախանձեցին վերոյիշեալ գործակատարից պատրաստել տալ Յարութեան ճրագալուցի երեկոյեան համար՝ Հայոց երեք եկեղեցեաց մէջ ևս նոյնգունակ «Դանիէլի» կարդացողներ, որպէս զի բոլոր հասարակութիւնը ևս այն հոգևոր մխիթարութիւնը տեսնեն, զգան և նկատեն իրանց զուրկ լինելը այն ճոխ և քաղցրաբարբառ Հայկական լեզուագիտութենէն՝ ևս և ուսումնագիտութենէն, որով և դարձեալ իրախուսուին իւրեանց որդւոց յառաջադիմութեանց համար՝ յամենայն դէպս ուրախ սրտիւ անձնանուէր լինիլ։

Դ. ԳՐԻԳՈՐ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆՑ.

8 Յունվ. 1875.
Ի Թէլաւ.

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ ՄՏԻՑ ԵՒ ԾԱԽՈՒՑ ԱՍՏՐԱԽԱՆԱՑ ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԱՑ Ի 1874 ԱՄԻ.

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Հոգաբարձութիւն Աստրախանայ Հայոց ծխական երկսեռ հոգևոր դպրոցաց ընդ սմին առաքելով ի Խմբագրատուն Արարատ ամսագրոյ զհամառօտ հաշուեցուցակ մտից և ծախուց երկսեռ դպրոցաց վասն 1874 ամի, խոնարհաբար խնդրէ ի լոյս ածել տպագրութեամբ յէջս ամսագրոյ յընդհանուր տեղեկութիւն ամենասիրելի համազգայնոց։

Հոգաբարձուք Յովսէփ Աւագ Քահանայ Քունիաթեանց
Գրիգոր Սողոմոնեանց
Սիմէոն Պօպօվեանց
Սարգիս Քուրջուլեանն։

	Ռ.	Կ.
Մնացորդք ի 1873 Թուականէ՝		
Մի դրամատոմսակ վաճառականական Դրամատան Աստրախանայ, տուեալ յ2 սեպտեմբերի 1872 ամի համար 2017, գումարաւ . .	1000	
Մի դրամատոմսակ Քաղաքային Հասարակական Դրամատան Աստրախանայ, տուեալ ի 1 Նոյեմբերի 1873 ամի համար. 66, գումարաւ . .	1200	
Երկու դրամատոմսակք առաջին և երկրորդ ներքին փոխառութեան 1864 և 1866 ամաց, համարօք սերիից 09548, և 12073, և տոմսակաց 1. և 37 գումարաւ . . .	315	
Պատրաստի դրամք . . .	52	63 1/4
	2567	63 1/4

Մ-ԱՊ Ի 1874 ՄԻ.

Գանձանակաղրամք՝ ժողովեալք յեկեղեցիս Աստրախանայ. . . 220 80

Դրամք՝ գոյացեալք ի Ներկայացմանէ Թատրոնի. . . . 375 40

Արդիւնք կրպակաց Թովմայի Դաւթեանց 147 87

Նուիրաղրամք Յակոբայ Կրանիկշիկեանց. 300

Դրամք՝ հանեալք ի գումարաց եկեղեցեաց Աստրախանայ . . 2027 50

Նուիրաղրամ Թադէոսի Ջաքարեան Շամխարեանց . . . 50

Նուիրաղրամք երկսեռ բարերար Անդամոց. 100

Հանեալ ի ոռճկէ ուսուցչի միոյ . 1

Նուիրաղրամք Յովհաննու Մարգանեանց. 7 88

Նուիրաղրամք Սարգսի Դալստեան Ջանումեանց 150

Նուիրաղրամք Յովհաննու Հայրապետեան Մասումեանց. . . 100

Տոկոսաղրամք գումարաց եղեալ Սեմինարիայի և ծխական դպրոցաց. 515

Նուիրաղրամք ստացողաց զչափաբերական վկայական ի Կոնսիստորիայէ 58 10

Տոկոսիք կտակաւանդ գումարի Հանգուցեալ Փուրվարդեանց. . 300

Դրամք վաճառեալ գրեանց. . 59 20

Տուրք յաշակերտաց . . 86

Դրամք՝ հանեալք ի տոկոսեաց գրամագլխոց աղքատաց. . . 300

Նուիրաղրամք Եղիսաբէթի Հայրապետեան Թամազեանց . . 100

4898 – 75

Չորս հատ սերի բիլեթք գնեալք ի գումարաց գրելոց ընդ յօդ. 6 . 200

Դրամատոմսակ նուիրեալ գումարաց ի Կրանիկշիկեանց, որք ընդ յօդ. 8 300

Դրամատոմսակ նուիրեալ գումարաց ի Մասումեանց, որք ընդ յօդ. 15 100

Դրամատոմսակ նուիրեալ գումարաց ի Թամազեանց, որք ընդ յօդ. 22 100

Բոլոր գումար. 8166 38¼

Ծ-Ի Ի 1874 ՄԻ.

Ի տարեկան ռոճիկ երկսեռ վերակացուաց և ուսուցչաց. . . 2857 26

Ի տարեկան ռոճիկ պահապանաց. 324

Ի տարեկան ռոճիկ ժամագործի. 24

Հանեալ ի ռոճկէ ուսուցչի միոյ որ գրեալ կայ ի մուտս 12 թ. . 1

Ի գին լուսանկարաց և շրջանակաց. 11

Ի գին վառելափայտի ի պէտս երկսեռ դպրոցաց 115 35

Ի գին դասական գրեանց . . 74 69

Ի վարձ կազմարարի. . . 40 85

Ի գին ուսումնական պիտոյից՝ թղթի, թանաքի, գրչի, տողաշարի, քարատախտակաց, քարագրչի, կաւճի, ձեռագործութեան զանազան նիւթոց ի պէտս օրիորդաց և ի նորոգութիւն ուսումնարանաց . . . 139 19

3587 – 34

Յարդեանց՝ գոյացելոց ի Ներկայացմանէ Թատրոնի գնեցան չորս սերի բիլեթք, որք գրեալ են ի մուտս ընդ յօդ. 23 200

Նուիրաղրամք Կրանիկշիկեանց՝ տուեալք ի դրամատուն վասն աճման տոկոսեաց, որոյ դրամատոմսակն գրեալ է ի մուտս ընդ յօդ. 24. . 300

Նուիրաղրամք Մասումեանց՝ տուեալք ի դրամատուն վասն աճման տոկոսեաց, որոյ դրամատոմսակն գրեալ է ի մուտս ընդ յօդ. 25. . 100

Նուիրաղրամք Թամազեանց, տուեալք ի դրամատուն վասն աճման տոկոսեաց, որոյ դրամատոմսակն գրեալ է ի մուտս ընդ յօդ 26. . 100

Բոլոր գումար 4287 34

Ծ-Ն-Ի-Ի. Ցընթացս 1874 ամի եղեալ են մուտք 4898 ր. 75 կ. և ծախք 3587 ր. 34 կ., զծախս ի բաց բարձեալ ի մուտից՝ մնան 1311 ր.

41 կ., յորոց 700 ր. են դրամատոմնակք և 611 ր. 41 կ. առձեռն պատրաստական։ Ըստ այսմ առ մեկն յունվարի 1875 ամի երկսեռ դպրոցք Աստրախանայ ունին դրամատոմնակաց իշահարերութեան 3215 ր. և առձեռն պատրաստական գումար 664 ր. 4 1/4 կպկ. ընդ ամենն երեք հազար ութ հարիւր եօթանասուն ինն բուբլի չորս և մի քառորդ կպկ. արծ.

ՄՇԱԿ ԼՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ.

Քանի քանի տեղերէն՝ մանաւանդ Տփխիսէն՝ Մշակ լրագրոյ մի ժամանակէ հետէ հետևած ընթացքը քննադատող, և Էջմիածնի նկատմամբ թշնամական (?) և իբր թէ զԱրարատ պախարակելոյ երազայուզութեամբք մոլեալ հրատարակած ինչ ինչ պարբերութեանց և յօդուածոց ի պատասխանի՝ երկարաձիգ և ըստ մեծի մասին առանց չարագրիւ կրից՝ և օրինաւոր ապացուցութեամբք պարզեալ գրութիւններ կստանամք՝ հրատարակելոյ թախանձանօք, որք՝ տարբեր տարբեր առիթներով՝ առարկայ եղած կէտերը ըստ արժանւոյն դիտելով և քննելով՝ կդատափետեն, յորոց երկու ազգու գրութիւնք հետևեալ իմաստից նման դիտողութեամբք կնքած են իւրեանց տողերը, թէ՝ մի անձն՝ որ մինչդեռ ինքն մշակուելոյ մեծապէս կկարօտի՝ ի՞նչպէս կարող է այլոց մշակ հանդիսանալ, թէ՝ այն որ Հայկաբանութեան մէջ շատ համբակ է՝ ինչպէս նա և ազգային կարևոր գիտութեանց մէջ, ի՞նչպէս կարող է Հայերէն օրինաւոր խմբագրութիւն կազմել, թէ՝ այն լրագրի խմբագրութիւն՝ որոյ հրատարակածները ըստ մեծի մասին ոչ Հայկաբանութիւն ունին և ոչ պարզ իմաստը կը հասկացուին, ի՞նչպէս կարող է այլոց հրատարակածները հասկանալ և քննադատել՝ ինչպէս նաև փորձառու չլինելով՝ ապագրական վրիպակները իմանալ, թէ՝ այն լրագիր՝ որ իբրև Հայոց լրագիր և Հայոց նկատմամբ ազգօգուտ մի որոշ ուղղութիւն և գաղափար չունի, և ոչ Հայոց կարօտութիւնքը և պէտքերը գիտէ, և շատ պարագայից մէջ աւելի օտար կամ մասնաւոր շահուց պաշտպան է, ի՞նչպէս կարող է Ազգային միւս պարբերական թերթից դէմ խիզախել՝ զոգցես պատգամներ որոտալ՝ և այն Հայերէն անուն կրելով, և թէ՝ լաւ չլինի՞ր՝ որ անունը ևս փոխէ և պարզ գոյնը ցոյց տայ ելն, ելն։ Մեք այս ամենը Մշակի խմբագրութեան ուշադրութեան և կամաց յանձնելով, միանգամայն կը յայտարարեմք՝ զի արդէն Մշակի ընթացք բազմաց քաջածանօթ լինելով՝ նորա՝ ինչպէս նաև այլոց նմանօրինակ հրատարակութեանց աւելի կարևորութիւն չենք տար, և այս առիթով առ մեզ ուղղուած գրութեանց աշխատաւորներէն ևս ներողամտութիւն կխնդրեմք հրատարակութեան չյանձնելոյս համար, վասն զի Արարատ Ազգիս իրական կարօտութեան՝ և համեմատաբար՝ այժմեան ճաշակին օգտաւոր լինելոյ համար հընարաւոր և անհրաժեշտ նիւթերով բեռնաւորեալ է, և զրավաստակ և պախարակիչ գրութեանց կարօտութիւն և թերթ չունի՝ որ առելի կրից թելադրութեանց արդիւնք եղած յարձակմունքները խնդրոց կարգը դասէ և թերթեր մրոտել տայ։

— Այս ևս դիտել պէտք է, զի ամեն հրատարակութիւն որքան ևս անպիտան